

1908.



14.2.26

Հօն

ՅՈՎՀԱՆՆԻՄ ՅՈՎՀԱՆՆԻՄԵԱՆ

եւ

==== ՔԱՆԱԴԱՏՆԵՐԸ =====

Տպուած ռէալիթետում

Թիֆլիս Տուրքական օր. Ն. Աղասեան 1908

891.99.092 Հովհաննիսյան  
Հ-62

128

20.112

13 APR 2011



Հայ զբագէտը, հայ զբողը շատ քիչ ըն-  
թերցող ունի. իսկ ինքը միշտ անապահով  
վիճակի մէջ, անկարող ի մի ամփոփել իւր  
բոլոր գրուածքները, ընթերցող փոքրա-  
թիւ հասարակութեան և անշատ քննադա-  
տութեան ներկայացնելու այն ամենը ինչ  
յուզել նրա հոգին, ինչ զբաղկցը է նրա  
միտքը: Ահա ուր պէտք է փնտրել այն հան-  
գամանքի պատճառը, թէ ինչո՞ւ այս կամ այն  
տաղանդ ժողովրդականութիւն չի ստանում  
մեր մէջ, որոնց շատ անդամ կորչիլու  
վտանգ է սպառնում:

Հասարակութիւնը ծանօթ չէ հայ մտքի  
արտադրութեան հետ և ահա ինչունասի-  
պուած է հալած իւղի տեղ ընդունել այն  
ամենը, ինչ զրում է կուսակցական ոգով  
տողորուած մի զբագէտ, զուրկ զեղարուես-

12.8

տական զգացումից: Քննադատը երբ ուսումնակիրում է «յիշողութեան օգնութեամբ» (տես լէօ Ռուսահայ գր. եր. ե.), կամ կարդալիս մի որեւէ հեղինակի գրուածքների ցուցակը հմանում է (ընդգծ. մերն է), որ նա զրել է և «իմ կաթոլիկ հարսնացուն» վէպը և ապա խոստովանում, թէ այդ վէպը կարդացած անգամ չէ, բայց չնայելով այդ բանին՝ եղրակացութիւններ է առաջ բերում, մեզ համար այդպիսի քննադատ անհասկանալի է: Սա նոյնն է թէ մենք եղրակացութիւնների գանք Մարս մոլորակի վրայ կարելի գրականութեան մասին, բայց անցնենք մեզ զրադեցնող հարցին:

Վերջերս լոյս տեսաւ ժամանակակից հայ բանաստեղծներից աւեգագոյնի—Յովհ. Յովհնանիսիսեանի—բանաստեղծութիւնների մի ժողովածուն: Այստեղ մենք գտնում ենք 1887 թ. հրատարակութիւնից 41 ինքնուրոյն և յետազ ժամանակների արտադրութիւն 72 նոյնպէս ինքնուրոյն գրուածքներ, որոնց թւում են «Կեանք» (երես 79), «Արագն եկաւ» (82) «Տղմուտ» (88) «Դարեր եկան, գորեր անցան, էջմիածին» (107), «Հաւատում եմ» (121) «Նոր Դարուն» (124) «Ալաքեազ բարձր սարին» (147) «Դարեր լացիր, ով մայր հայրենիք» (153) և ուրիշները:

Թէ ինչ ընդունելութիւն գտաւ քսան տա-

րի առաջ Յովհնանիսեանը իւր «Բանաստեղծութիւններով» մեզ լաւ և կինդանի կ'պատկերացնէ Ս. Մանդինեանի քննադատականը, որ լոյս է տեսել «Ազրիւր» ամսագրի 1888 թ. 1 և 2 համարներում «Նոր բանաստեղծ» վերնագրով. «Մամուլը արդէն աւետեց, ասում է Մանդինեանը, մի փայլուն աստղի երեսիթը մեր գրականութեան հորիզոնի վրայ»: և մի փոքր յետոյ շարունակում է—«Գիրքը շատ աւելի բարձր արժանաւորութիւններ ունի, բան ինչպէս որ ցարդ նրան նկարագրել են. և գուցէ դեռ ևս շատ անհատների կրած տպաւորութիւնները պէտք է լսենք մինչև որ կարողանանք գէթ մերձաւորապէս կշռել այդ նոր զիւտի բոլոր պատուականութիւնը»:

Այժմ քսան տարի յետոյ, երբ լոյս է տեսնում յետազայ ժամանակների գրուածքներով լրացրած ժողովածուն, նորից հայ ընթերցող հասարակութիւնը զգացմունքների աշխարհ սաւառնեց, նորից խօսեց հայ անաշառ քննադատը:

Եւ այս նոր հրատարակութեան առթիւ գրուածներից զիւտաւոն է. Մ. Բերբերեանի քննադատական յօդուածը «Սգաւոր իդէալիստ» խորագրով, որ ապուեց ներկայ թուի «Արարատ» ամսագրի № 4-ում և ապա առանձին բրոշիրով:

Հնթերցողը հարց կ'առայ մեզ թէ՝ ինչու  
ենք կանգ առնում մի յօդուածի վրայ,  
որը նոյնպէս մատչելի է քչերին, նախ ամսա-  
կրում տպած լինելու և ապա առանձին վա-  
ճառ հանած չ'լինելու պատճառով, որով  
դժուարանում է քննադատութեան հետ ծա-  
նօթանալու եղանակը: Ուզում ենք պարզ  
ասած լինել մեր միտքը:

Հայոց գրականութեան պատմութիւն մենք  
չունենք. եղածներն էլ անհինն և, ինչպէս  
ասինք, հայ ցաւալի իրականութեան ար-  
տադրութիւն են, այն է զեկավարուած անձ-  
նական հակալրական և համակրական ոգով:

Այս փոքրիկ տեսութիւնով մենք ուզում  
ենք մի հայեացք ձգել Յ. Յովհաննիսեանի  
մասին եղած կարծիքների վրայ, նախ քան  
քննական ուսումնասիրութիւնը ի միջի այլոց  
և այս բանաստեղծի մասին:

Կարծիքների լրութիւնը պահպանելու հա-  
մար մենք այստեղ ամբողջութեամբ տառջ  
ենք բերում «Խուսահայ գրականութիւն»  
կոչուած գրքից Յովհաննիսեանի մասին  
ամբողջ կարծիքը և ապա կ'զիմենք այլ  
աղբիւրների:

«Յ. Յովհաննիսեանը սկզբից լաւ ընդու-  
նելութիւն գտաւ. կային այնպիսիները, ո-  
րոնք սպասում էին նրանից շատ բան: Բայց  
յոյժները չ'արդարացան և Պ. Յովհ. այժմ մո-

ռացուած է. մոռացուել է ոչ այն պատճառով  
որ շատ քիչ է խօսում, այլ որովհետեւ խօսած  
ժամանակն էլ մի առանձին բան չէ տալիս:  
Մի ժամանակ ունէր նա, երբ անձնական  
տրամադրութեան մի քանի աջող արտայայ-  
տութիւններ տուեց: Անցաւ այդ ժամանակը,  
և սէրը, վիշտը, բնութիւնը, որոնց գլխա-  
ւորապէս ճանաչում էր նրա ոտանաւորը,  
սառան, չ'կարողացան ոգեսրութիւն պահ-  
պանել նրա մէջ: Իր առաջին ոտանաւորնե-  
րից մէկի մէջ նա տեսնում էր իր առջև եր-  
կու ճանապարհ. մէկը տանում է անձնական  
բարօրութեան աշխարհը, միւսը հասարա-  
կական անսպասար ասպարէզը. մի տեղ կոյս,  
«մարմարիոն կուրծք», «շամամ ծծեր», «գը-  
րսիխտավայել վայելչութիւն» մատակարա-  
րող վառ աչքեր. իսկ միւս տեղ—արիւն ար-  
տասունք, «անտէր ամբոխի անվերջ տառա-  
պանք», անձնուրաց մշակի փշեայ պսակ:

Կանգնած այդ երկու ճանապարհի վրայ,  
նա հարցնում է՝ իրկուսից ո՞րը ընտրել: Եւ  
պատասխան տալ, ընտրել չէ կարողանում:  
Շատ բնորոշ հանգամանք: Բաւական չէ ո-  
տանաւոր հիւսելը, գրել իմանալը: Գործը  
կանգնում է գրողի առաջ և հարցնում է.  
Ինչ տեսակ մարդ ես դու: Եւ այդ անորո-  
շութիւնը, այդ թուլամորթ երերումը, որ  
այդպէս անլուծելի է թողնում կարևոր հար-

յը, յատուկ է մեր այժմիան կրիտասար-  
դութեան մեծ մասին. պ. Յովհաննիսեան  
պինչև այժմ էլ չէ կարողացել ասել թէ ո՞րն  
է ընտրում: Եւ լաւ է անում որ չէ տ-  
սում: Գոնէ նա հարկադրուած չէր լինի  
բառեր, դատարկ բառեր արտասանել, ինչ-  
պէս շատերն են անում իրանց ոգու աղքա-  
տութիւնը ծածկելու հսմար: Կայ և այն, որ  
այժմ ոչ ոք չէ նետաքրքրում այն հար-  
ցով թէ ի՞նչ ճանապարհ է նա ընտրում:  
Պ. Յովհաննիսեանը շատ խնամքով աշխատել  
է, որ այդպիսի հետաքրքրութիւն չ' լինի»:

Այս է լէօի ասածը Յովհ. Յովհաննիսեանի  
մասին: Բայց բաւականանք զրանով և հա-  
մաձայնութեանք լէօի տրծարծած մտքերի հետ  
քերթողի վերաբերմամբ: Մենք անձամբ և,  
կարծում ենք, շատ շատերը մեզ հետ, որոնք  
այժմ ձեռքի տակ ունեն բանաստեղծութիւն-  
ների ժողովածուն, անկարող ենք ձեռք մեկ-  
նել այնպիսի մտքերի, որոնք լոկ «դատարկ  
բառեր» են և մերկացնում են «քննադատի»  
վերլուծական կարողութիւնը:

Բանաստեղծի մասին եղած կարծիքներից  
մենք ուզում ենք առանձին կերպով  
կանք առնել այն հարցի վրայ թէ՝ ուր է  
տանում մեզ բանաստեղծը:

Բայց նախ մի քանի խօսք գրելու եղա-  
նակի մասին:

6

На всякий звукъ  
Свой откликъ въ воздухъ пустомъ

Родишь ты вдругъ

ասել է Պուշկինը. և Յովհաննիսեանը նայ  
իրականութեան արձագանք տուեց և մի  
ուժեղ արձագանք. Գ. Ենգիբարեանը «Ար-  
ձագանքում» տպագրուած քննադատականի  
մէջ ասում է. «Յանաստեղծը կեանքի ձը-  
րագն է և լրյուը, նոր կեանքի ուսումնասի-  
րող տոաջնորդը, երկու գիտակցական  
կեանքով ապրող անդամ: Իսկ Գ. Վանցեանը  
ներկայ թուի «Մշակի» համարներից մէկում  
գրում է. «Նա եղաւ այն օղակը, որ ես ո-  
րոնում էի Ռ. Պատկանեանի և մեր նորա-  
գոյն բանաստեղծների մէջ և չէի գտնում.  
կամուրջը, որով հայ բանաստեղծական  
միտքը, ազգային-հայրենասիրականից պի-  
տի անցներ լիրիկ անհատական աշխարհը  
յանձին Ա. Խանակեանի, բաց էր մնում ինձ  
համար»:

Իետ Մանգինեանը, քննելով բանաստեղծի  
հոգու զարգացումը, մելամաղձութեան թելն  
էր ընզգձում իւր քննադատականի մէջ. և  
իրօք, ով է այն ժայռը և ի՞նչ այն ալիքը,  
որոնց բանաստեղծը հետեւել պատկերա-  
ցումն է տալիս.

Որպէս յաղթանդամ մի ծերուկ հսկայ,  
Կախուած է ժայռը ջրերի վրայ.

7

Ալիքը կայտառ գնում են, գալիս  
Եւ ժայռին սիրոյ համբոյը են տալիս:

Խաղում են անհոգ ալիքը գետի,  
Ցուցնում են զրկած պատկերն արեի,  
Եւ որպէս մանուկ ժպիտն երեսին,  
Մեղմիկ շշունչով խօսում են ժայռին.

«Լսիր, ծերունի, ինչու ճակատիդ  
Սև կնձիւները չեն տալիս դէմքիդ  
Մի օր խնդութեան շողով ցոլանալ—  
Ռդը փոխւում է, դու նոյնն ես դարձեալ:

«Ազատ լեռների ազատ զաւակներ,  
Մենք քեզ բերել ենք անթիւ գոհարներ.  
Երկնքի դստեր—վարդի լեռնաուն  
Կը ցողենք կուրծքիդ անուշնութիւն:

«Մենք երանաւէտ քնքուշ նուագով  
Կը կոչենք խորքից ձեւերն երամով  
Եւ ոսկէզօծուած գարնան արկից  
Քեզ մեր զուարթ պարին կ'անենք խնդակից:

«Եւ քո ականջին միշտ սիրոյ երգեր  
Մենք արշալուսից կասենք մինչ աստղեր,  
Եւ քեզ կը փարենք և քո ծեր կուրծքին  
Մենք հանգչել կ'տանք մեր քաղցըր կրքին...»

Ալիքը կայտառ գնում են, գալիս,  
Սև ժայռը նախկին իւր վիշտն է լալիս...

Խաղում են ալիք ուրախ կարկաջում—  
Նա կրկին անշարժ, նա կրկին արտում...

Իսկ Բերբերեանը որոնում է բանաստեղծի յոռետեսութեան սկզբնապատճառները. Նա պատկերացնում է ոռւսական ժամանակակից իրականութիւնը, երբ կուր և բողոք արտայայտողները կամ Միթիր էլն քշւում և կամ ստիպուած արտասահման փախչում և այստեղ է գտնում յոռետեսութեան պատճառները: Մանաւանդ երբ ի նկատի՝ առնենք որ Յ. Յովհաննիսեանը ուսել է Լազարեան Ճեմարանում ոռւս երկնքի տակ: «Բայց յոռետես լինելու մի ուրիշ, գերագոյն, պատճառ ևս ունէր հայ բանաստեղծը, տառմ է Բերբերեանը—դա հայրենիքի դառն վիճակն էր»:

Հայրենիքի դառը վիճակը բանաստեղծը ոլլում է քաղաքացիական ողբով. նրան չեն գրաւում ուտոպիաները:

Բանաստեղծի ալէկոն հոգին մի ելք է փընտրում և հակառակ լէօի ասածների այդ ելքը կարողանում է գտնել: Դեռ իւր պատանեկան գրուածքներում «մի աներեսյթ առաջնորդ, մի հրեշտակ պահապան է գտել բանաստեղծը, ասում է Մանդինեանը, որ այսուհետեւ միշտ նրան ուղեկցում է...» և այդ «առաջնորդը», «հրեշտակը» աւելի զգալի կերպով է առաջ գալիս ապագայ զարգացած

շրջանում, ճգնաժամը մի փոփոխութիւն է առաջ բերել բանաստեղծի հոգու մէջ, յոռեա-տեսութիւնը տեղի է տուել լաւատեսութեան. նա ստեղծել է մի «յենակէտ», հաստատուն կայան և կեանքի խարիսխ». Հիասթավու-թիւնից ու անհուն յոռեատեսութիւնից, ա-սում է Մ. Բերբերեանը, Յովհաննիսեանին փրկողը նրա առողջ բանականութիւնն է, լաւատես բնաւորութիւնը, իդէալիստ ոգին:

Իսկ ենդ, ասում է. «Յովհաննիսեանի վշ-տերի միջից երևում է անխախտ և պարզ հաւատ գէպի բարին, թէ աշխարհում զեռ չի կորել բարին և գեղիցիկը: Նա հաւատում է, որ անկեղծ սէրը կարող է մոռացնել տալ վատութիւնը»:

Գ. Վանցեանը գտնում է, որ դա մի տաղանդ է, որ «իւր ամբողջ փայլով ու բոցով երևան է գալիս այն երգերի մէջ, ուր գեղում են բանաստեղծի զգացումները առ կոյս և առ սիրելին»..

Երկայնակեաց և անման է այն ամենը ինչ կարող է արտայայտութիւն լինել ամ-բողջ մարդկութեան և «Յովհաննիսեանը, ասում է Մանդինեանը, գողարիկ և չքնաղ եղանակով է երգում մարդկային հոգու ընդհանուր հանգամանքները. այս այնքան ճշմարիտ է, որ եթէ նրանց երկանց մեծ մասը օտար լեզուների թարգմանուի, հայ-

դրականութիւնը չի ամաչիլ օտարների ա-ռաջ». և իրօք կըկորչի ամեն ինչ իսկ այն ամենը ինչ սերտ կապ ունի, կամ աւելի ճիշտ ասած, բղխում է մարդկային մտքից ու զգացումից, կմնայ իրեւ թարմ ժառան-գութիւն աղաղայ սերնդներին:

Մի շարք քնարերգութիւններից մենք իմանում ենք, թէ ինչ հոգեկան մտատան-ջանքներ են յուղել բանաստեղծի քնարը. ճգնաժամին նա չէ կարող անպատճան թողնել վաղուց դրած հարցը թէ՝

Պիտի հասնեմ մի օր փարոսին  
Կեանքի կատաղի հոսանքից փրկուած.  
և մի տեղ բացազնչում է,

Խարբի՛ ինձ դարձեալ շքեղ ցնորքով.  
իսկ մի այլ տեղ, այն է «Կեանք» ոտանա-ւորի մէջ ասում է.

Տուր մշտականաչ հրաշագեղ գարուն  
Վառ, երանաւէտ, անանց երազներ.  
Թող մենք անձնատուր մի անհուն զգացման  
Անվիշտ քուն լինինք, օրեր տարիներ.

Յուսահատութեան անդունդը խուսափե-  
լու համար բանաստեղծը, ինչպէս ճիշտ նը-  
կատում է Բերբերեանը, ընտրում է իրեն  
ինքնամոռացութեան ուղին. «և կոիւը վեր-  
ջացած է իդէալիստը թէպէտ սգաւոր, բայց  
յաղթող է գուրս զալիս այդ ճակատամար-  
տից»:

Ահա թէ ինչ է ասում նա իւր լաւագոյն  
ըանաստեղծութիւններից մէկի—Արտաւազ-  
դի—մէջ.

Բայցոչ, հաւատում ենք դեռ մենք փրկու-  
թեան,

Մեզ մի նոր երկնքից նոր լոյս կ'բացուի,  
Եւ տեսնում ենք ահա ծիածան

Մենք ազատ, լուսաւած մի նոր վիճակի...  
և կամ՝

Բարդ-բարդ ամպեր թող կուտակուին թան-  
ձրանան,

Ամպրոպ ճայթի, շանթեր փայլին մեր վըրան.

Չգնատինք և միշտ յառաջ անլրդով—  
Գիտեմ, եղբայր, տեղ կհասնինք արեւով։

Եւ մենք հասանք, անցանք դժուար ճանա-

պարն

Պահ մի կրկին արևն ելաւ ոսկէվառ.

Ունայնութիւնը տեղիք է տալիս ճշմար-  
տութեան, սիրոյ, աղատութեան։ Զինուած  
այս գաղափարներով նաւորդը առաջ է ըն-  
թանում կեանքի շաւզով, իրեն առաջնորդ  
ընտրելով վեհ գաղափարը. մի գաղափար,  
որ լոյս է սփոռում մեր առաջ և վհատու-  
թեան կարելիութիւնը վերացնում։

Հաւատում եմ մեննելու չէ սուրբ գաղափար,  
Եւ անմահ է, որ մեռնում է նորա համար.  
«Լուսաւոր ապագայի վառ յոյսը, այն անկեղծ

12

հաւատով, որ մարդկութիւնը վաղ թէ ուշ  
կ'վերածնուի տալիս է Յովհաննիսեանի բա-  
նաստեղծութիւններին մի տեսակ առանձին  
վեհութիւն»։ «այդ վեհ գաղափարը—աշ-  
խատել, կռուել, զոհուել մարդկային աւելի  
լաւ ապագայի համար—ոյժ և կարողութիւն  
է տալիս սպասոր իրէալիստին չընկնուել կեան-  
քի արհաւելքների երեսից»։

Երբ մատաղ մուսաս ժպիտն ելիսին  
Առաջին անգամ ինձ երկեցաւ  
Նա գեղեցկութեան, սիրոյ պատկերներ  
Երկրպագելու ինձ պատուէր տուաւ։  
Բայց—անցան դասեր, և ներքին մի ճայն  
Մի նոր հուր վառեց իմ յուզուած հոգում։  
Մի այլ տեղ բանաստեղծը դիմելով երգչին  
բացանչում է.

Վառիր գու մեր սրտերում  
Հուրը ազնիւ կրքերի  
Երկրպագու ենք կանգնում  
Ճշմարտութեան պատկերի։  
Երկար հոգեկան երերումից յետոյ քնար-  
երգուն խոստովանում է.

Ես դեռ անվըհատ շարունակում եմ  
իմ ճանապարհը, գեռ հաւատալով  
Թէ գուցէ մի օր և ես գտնում եմ  
Այն, ինչ չը կամի բաղդը տալ սիրով։  
Բանաստեղծի հոգին միշտ զգայուն է և

13

նորան է տրուած մարդկութեան ղեկը. նա  
պիտի տանի առաջ դէպի նա հոգեկան հա-  
յեացք դարձածներին և Յովհաննիսեանը չի  
յուսադրում սպասողներին.

Եւ քանի վաս է, չէ հանգել կրակ,  
Յառաջ, միշտ յառաջ, ընկեր թանկագին.  
ասում է նա մի տեղ:

Դէպի վեհ գաղափարը նա առաջ է զնում  
իւր բիւրեղանման պարզ ձգտումներով.

Մենք առաջ կբերենք «Սարն ի վեր»  
բանաստեղծութիւնը այստեղ, որ ուժիղ  
կերպով ընդգծում է մեր ասածները:

Դէպի վեր, դէպի վեր... անվերջ է ուղիս.  
Յոզնեցուն բազուկներս՝ այս կուռւմն անզօր,  
Սպառեցաւ և վերջին ոյժն էլ ծնկներիս-  
Դէպի վեր, սարն ի վեր, քաջասիրու զինւոր:

Աւելի կարծրանան թող այս ու ժայռեր,  
Աւելի թող սպառնայ անգունդն ահաւոր,  
Դեռ շունչ կայ բերանումս, շարժում են  
ձեռքեր

Դէպի վեր, սարն ի վեր, ով արի զինւոր:

Դեռ հեռու է կատարն անամպ ու յստակ,  
Բայց եթէ չըհասնենք այստեղ մենք այսօր,  
Վաղն այստեղ ենք անշուշտ, մերն է յաղթանակ  
Դէպի վեր, սարն ի վեր, անվեհներ զինւոր:


Ահա թէ ուր է տանում մեղ Յովհ. Յով-

հաննիսեանը. Դէպի վեր. Դէպի վեհ գաղա-  
փարը, դէպի «Կատարն անամպ ու յստակ:»

Այսպիսով մենք դիմեցինք այն հարցի, որ  
դրել էինք սկզբում. այն է թէ՝ ուր է տա-  
նում մեղ Յովհ. Յովհաննիսեանի մուսան և  
մենք կանգ կ'առնէինք այստեղ, բայց մի  
քանի խօսք էլի:

Սկզբում մենք մի ակնարկ արինք արդէն  
թէ ոնց է գրուել «Ռուսանայ գրականու-  
թիւն» կոչուած գիրքը. այժմ միայն ուզում  
ենք աւելացնել թէ՝ լէօն խիստ շատ է ըն-  
կղմուել ինքնախարէութեան մէջ ասելով՝  
«Այժմ ոչ ոք (ընդգծումը մերն է) չի էլ  
հետաքրքրում այն հարցով թէ ի՞նչ ճանա-  
պարհ է նա (Յովհ.) ընտրում:»

Բայց չէ ոք դեռ հնչում է «Ընրա» ձայնը,  
իսկ միտքը առաջ ընթանում. և քննադա-  
տութիւնը անկարող է իւր վերջին անաշտո-  
խօսքն արտասանել բանաստեղծի վերաբեր-  
մամբ:



ՀՀ Ազգային գրադարա



NL0382656

70.112

891.99.0921 Indochinese  
2 - 62